

Նոր Կորոնավիրուս (COVID-19)

Լոս Անջելես Շրջանի Հանրային Առողջապահության Վարչություն
Ուղեցույց Քաղաքական Քարոզարշավի Համար

Համապետական ընտրությունների մոտենալուն զուգահեռ՝ քաղաքական կուսակցություններն ու նրանց քարոզարշավները կսկսեն աջակցել իրենց թեկնածուներին, կմեկնարկեն նաև տեղական և նահանգային քվեարկության միջոցառումները: Կարևոր կլինի հաշվի առնել, թե ինչպես կապ հաստատել ընտրողների հետ այնպիսի ճանապարհներով, որոնք կպաշտպանեն և՛ հանրության, և՛ քարոզարշավի անձնակազմի առողջությունը և նվազագույնի կհասցնեն COVID-19-ով վարակվելու հավանականությունը: Թեև ավանդական փակ քարոզարշավն ու դրամահավաքի հավաքները, ձեռքսեղմումներն կամ «ողջույնները» մասնավոր տներում չի թույլատրվում, ընտրողների հետ կապվելու շատ այլ եղանակներ կան: Այս ուղեցույց փաստաթուղթը նախանշում է բազմաթիվ եղանակներ, որոնցով քարոզարշավները կարող են անվտանգ կերպով հասնել ընտրազանգվածին:

Թվային տարբերակներ

- Վիրտուալ քաղաքապետարանները կամ վեբինարներն ու թվային հարթակները հարյուրավոր կամ նույնիսկ հազարավոր մարդկանց թույլ են տալիս իրենց բջջային հեռախոսներով, պլանշետներով կամ համակարգչով միանալ տեսազանգին: Քարոզարշավները կարող են մարդկանց հրավիրել միանալու՝ էլ. նամակով կամ տեքստային հաղորդագրությամբ հղում կամ հեռախոսահամար ուղարկելու միջոցով:
- Ուղիղ հեռարձակում - Միջոցառումները կարող են իրական ժամանակում հեռարձակվել սոցիալական կայքերի հարթակներում:
- Էլ. նամակներ և կայքեր – Հաղորդակցումը և դրամահավաքները կարող են իրականացվել քարոզարշավի կայքերում և էլ. հաղորդակցության միջոցով:
- Թվային գովազդ

Ավելի ցածր ռիսկայնության ավանդական տարբերակներ

- Հեռուստա- և ռադիոգովազդ
- Թեկնածուների միջև բացօթյա և առանց հանդիսատեսների բանավեճերը թույլատրելի են, եթե բոլոր անհատների միջև պահպանվի առնվազն 6 ոտնաչափ հեռավորություն:
- Հեռավար ձեպագրույցներ և հեռավար քաղաքապետարան – Մեծ կոնֆերանս-զանգերի միջոցով կապի հաստատում մի քանի անհատների հետ:
- Հեռախոսային և տեքստային բանկեր – Մեկ առ մեկ կապի հաստատում ընտրողների հետ՝ խնդիրներ քննարկելու և հետադարձ կապ ստանալու համար:

Ավելի ցածր ռիսկայնությամբ նոր մոտեցումներ

Ավտոմեքենաների շքերթները, որոնք համապատասխանում են փոխադրամիջոցներով կատարվող շքերթների համար նախատեսված՝ հանրային առողջապահական ուղեցույցին, թույլատրվում են, այդ թվում՝ շարժական միջոցառումները, որտեղ անհատները կարող են

Նոր Կորոնավիրուս (COVID-19)

Լոս Անջելես Շրջանի Հանրային Առողջապահության Վարչություն
Ուղեցույց Քաղաքական Քարոզարշավի Համար

ստանալ քարոզարշավի նյութեր կամ քաղցրավենիքի պայուսակներ (որոնք սահմանափակվում են միայն առևտրային փաթեթավորված չփչացող հյուրասիրություններով) կամ կազմակերպիչներից իրեր վերցնել, մինչև մասնակիցները մնում են իրենց փոխադրամիջոցներում:

Բարձր ռիսկայնության թույլատրելի գործողություններ

Մինչ վիրտուալ միջոցառումները խրախուսվում են՝ համայնքում վիրուսի տարածման հնարավորությունը սահմանափակելու համար, դեմառդեմ քարոզարշավը թույլատրվում է միայն բացօթյա ձևաչափով: Հովանավորներն ու մասնակիցները պետք է համապատասխանեն հետևյալ պահանջներին:

- Մինչ այցելուները կմտնեն բացօթյա հաստատություն, կատարվում է ախտանիշների ստուգում: Ստուգումները պետք է ներառեն հազի, շնչարգելության, դժվարաշնչության, ջերմության կամ դողի առկայության ստուգում և տեղեկացում այն մասին, թե արդյոք անձը տվյալ պահին ենթարկվում է մեկուսացման կամ կարանտինի հրամանագրերի: Այս ստուգումները կարող են կատարվել դեմառդեմ կամ այլընտրանքային եղանակներով, օրինակ՝ առցանց գրանցման համակարգերի, հեռախոսային հավելվածների կամ հաստատության մուտքի մոտ տեղադրված ցուցանակների միջոցով, որոնք տեղեկացնում են, որ այս ախտանիշներն ունեցող այցելուները չպետք է մուտք գործեն հաստատության տարածք:
- Քարոզարշավին ժամանող այցելուներին հիշեցվում է միջոցառմանը մասնակցելու և հաստատության տարածքում գտնվելու ողջ ընթացքում կրել դիմակ: Սա վերաբերում է բոլոր մեծահասակներին, ինչպես նաև 2 տարեկան և ավելի բարձր տարիքի երեխաներին: Դիմակ կրելու պահանջից ազատվում են միայն այն անձինք, որոնք բուժաշխատողի կողմից այն չկրելու հրահանգ են ստացել: Ձեր աշխատակիցների և այլ այցելուների անվտանգությունն ապահովելու համար՝ անհրաժեշտ է դիմակներ ունենալ այն անձանց համար, որոնք ժամանում են առանց դիմակների:
- Այս միջոցառումների ընթացքում չի կարելի մատուցել սնունդ կամ ըմպելիքներ:
- Իրականացվել են միջոցառումներ (նախապես գրանցում, մուտքի մոտ այցելուների թվի հաշվում)՝ համոզվելու համար, որ այցելուների թիվը չի գերազանցում մարդկանց թվին, որոնք կարող են գտնվել բացօթյա տարածքում՝ պահպանելով ֆիզիկական հեռավորություն (տարբեր տնային տնտեսությունների անդամները պետք է նստեն կամ կանգնեն միմյանցից 6 ոտնաչափ հեռավորության վրա):
- Ավտոկայանատեղիները ձևափոխվել են՝ կուտակումները սահմանափակելու և պատշաճ հեռավորության ապահովման համար (օրինակ՝ յուրաքանչյուր հաջորդ տարածքը փակելու միջոցով):
- Ավտոկայանատեղիների և ժամանման այլ կետերի ու հավաքի անցկացման տարածքի միջև սահմանվել են հստակ անցուղիներ՝ նվազագույնի հասցնելու մարդկանց կուտակումները, հնարավորություն տալու վերահսկել մարդկանց թվաքանակը և տարածք



Նոր Կորոնավիրուս (COVID-19)

Լոս Անջելես Շրջանի Հանրային Առողջապահության Վարչություն Ուղեցույց Քաղաքական Քարոզարշավի Համար

թողնելու անձնակազմի անդամների և այցելուների մուտքի ժամանակ ախտանիշների ստուգման համար:

- Անձնակազմի՝ դիմակ կրող անդամը (կամ անդամները, եթե կա մեկից ավելի անցուղի) կանգնում է անցուղու սկզբնամասում՝ ժամանող կամ հեռացող ամենամոտ անձից առնվազն 6 ոտնաչափ հեռավորության վրա՝ հետևելու դիմակների օգտագործմանն ու անցուղու զբաղվածությանը:
- Եթե միջոցառումների մասնակիցները մինչ նստելը կամ տեղանքում իրենց ներկայության որևէ այլ պահի պետք է սպասեն, ապա օգտագործվում են նշումներ՝ ցուցադրելու անհատների միջև պահանջվող վեց ոտնաչափ հեռավորությունը:
- Բացօթյա տարածքները ձևավորվում են՝ ֆիզիկական հեռավորության պահպանումը թույլ տալու նպատակով: Եթե օգտագործվում են աթոռներ, նստարաններ կամ կանգնելու տարածք, դասավորումն ու գծանշումները կատարվում են այնպես, որ պետքի անհատների կամ տնային տնտեսությունների խմբերի և այլ տնային տնտեսությունների խմբերի կամ անհատների միջև հնարավոր լինի պահպանել վեց ոտնաչափ հեռավորություն:
- Եթե կիրառելի է, բացօթյա միջոցառումների համար օգտագործվող տարածքում գտնվող միջանցքները դարձվում են միակողմանի՝ ֆիզիկական հեռավորության պահպանումը հնարավոր դարձնելու համար:
- Պողիումները, հարթակները և բանախոսների տարածքները վերաձևավորվում են՝ բանախոսների միջև առնվազն վեց ոտնաչափ հեռավորության պահպանումն ապահովելու համար:
- Բարձրախոսներն ու պողիումները պետք է մաքրվեն յուրաքանչյուր բանախոսից հետո:
- Անձնակազմի անդամներին հրահանգվել է տեղանքի բոլոր տարածքներում միմյանցից պահպանել առնվազն վեց ոտնաչափ հեռավորություն:
- Հնարավորության դեպքում առաջարկվում է վիրտուալ հասանելիություն այն այցելուների համար, որոնք ցանկանում են մասնակցել, բայց COVID-19-ով վարակվելու դեպքում գտնվում են բարձր վտանգի տակ:
- Կազմակերպվել է այնպես, որ պետքարաններ անվտանգ կերպով հասանելի լինեն այցելուների համար բացօթյա քարոզարշավի միջոցառումների ժամանակ: Տեղանքում կարող է ապահովվել շարժական բաց զուգարան և ձեռքերի լվացման հարմարանքներ և/կամ հասանելի դարձնել ներսի պետքարանները: Եթե հասանելի են դառնում ներսի հարմարանքները, իրականացվում են հետևյալ նախազգուշական միջոցները.
 - a. Միջոցառման համար օգտագործվող բացօթյա տարածքից դեպի սանհանգույցների ներքին տեղանք նշվում է սահմանված ուղի:
 - b. Օգտագործվում են ժապավեններ կամ այլ նշումներ՝ համոզվելու, ֆիզիկական հեռավորություն է պահպանվում այն դեպքում, եթե այցելուները հերթ են կանգնում սանհանգույցներից օգտվելու համար:

Նոր Կորոնավիրուս (COVID-19)

Լոս Անջելես Շրջանի Հանրային Առողջապահության Վարչություն
Ուղեցույց Քաղաքական Քարոզարշավի Համար

- c. Այցելուներին խորհուրդ է տրվում միջոցառման ընթացքում սանհանգույցներից օգտվել անհրաժեշտության դեպքում՝ խուսափելու մարդկանց կուտակումներից:
- d. Սանհանգույցների հարմարանքները աշխատանքային լավ վիճակում են և հազեցած են բավարար քանակությամբ օճառով և մեկանգամյա օգտագործման սրբիչներով՝ ձեռքերի պարտադիր լվացումը հնարավոր դարձնելու նպատակով:
- e. Սանհանգույցի հարմարանքներն այնպես են ձևավորված, որպեսզի պատերով առանձնացված խցերից դուրս հնարավոր լինի պահպանել ֆիզիկական հեռավորություն:
- f. Անձնակազմի՝ դիմակ կրող անդամը (կամ անդամները, եթե մեկից ավելի փակ սանհանգույցի տարբերակ կա) կանգնում է սանհանգույցի մուտքի մոտ, մտնող կամ դուրս եկող ամենամոտ անձից առնվազն վեց ոտնաչափ հեռավորության վրա՝ վերահսկելու դիմակների օգտագործումն ու անցուղու զբաղվածությունը:
- g. Անձնակազմի անդամներին հրահանգվել է միմյանցից առնվազն վեց ոտնաչափ հեռավորություն պահպանել տեղանքի բոլոր տարածքներում, ներառյալ՝ աշխատանքային փակ տարածքներում:

Թույլատրվում է, բայց խորհուրդ չի տրվում

Այս կատեգորիայի մեջ է մտնում «դռնից դուր» տեղեկատվության տարածումը: Կարևոր է, որ «դռնից դուր» անցնող անձնակազմի յուրաքանչյուր անդամ կամ կամավոր տեղյակ լինի իր տնային տնտեսության անդամ չհանդիսացող և դիմակ չկրող անհատների հետ շփման հետ կապված վտանգների մասին: Այս գործողություններին մասնակցող անձնակազմին պետք է պատշաճ կերպով հրահանգվի հետևել հետևյալ կանոններին.

- Առնվազն վեց ոտնաչափ հեռավորության վրա մնալ այն անձից, ում այցելում եք, կամ այլ անձանցից, ում հանդիպում են դռնից դուր քայլելու ընթացքում:
- Ողջ շփման ընթացքում կրել դիմակ: (Այն անձինք, ովքեր առողջական խնդիրների պատճառով չեն կարող դիմակ կրել, պետք է ազատվեն տնային այցեր կատարելուց)
- Ամբողջ այցի ընթացքում մնալ տնից դուրս: Անձին բացատրել, որ չի թույլատրվում իրենց տուն մտնել, և անհրաժեշտ է հեռավորություն պահպանել՝ նրանց անվտանգությունն ապահովելու համար:
- Հրաժարվեք ձեռքսեղմումներից: Սահմանափակվեք ողջույնի խոսքերով ծանոթությամբ:
- Խուսափեք նյութեր, օրինակ՝ բրոշյուրներ կամ թուղթիկներ հանձնելուց: Եթե պետք է նյութեր բաժանեք, ապա անպայման նախապես հարցրեք անձին, թե արդյո՞ք նրան հետաքրքրում է նյութը: Եթե անձը որոշում է, որ նյութը ձեզնից ընդունելուց հետո չի ցանկանում պահել այն, խնդրեք նրան ազատվել դրանից, հետ մի՛ վերցրեք այն:
- Ձեզ մոտ ունեցեք ձեռքերի ախտահանիչ միջոց և անպայման օգտագործեք այն հաճախակի հավոդ մակերեսներին, օրինակ՝ դռների փակասներին, բռնակներին և դռան զանգերին դիպչելուց հետո:

Նոր Կորոնավիրուս (COVID-19)

Լոս Անջելես Շրջանի Հանրային Առողջապահության Վարչություն Ուղեցույց Քաղաքական Քարոզարշավի Համար

- Եթե դուք բացող անձը դիմակ չի կրում և/կամ ունի ախտանիշներ, տեղեկացրեք նրան, որ կվերադառնաք մեկ այլ օր և տեղեկատվությունն ուղարկեք նրանց էլեկտրոնային տարբերակով կամ փոստով:

Իմացեք՝ որտեղից ստանալ հավաստի տեղեկատվություն

Զգուշացեք նոր կորոնավիրուսի շուրջ ծավալվող խարդախություններից, կեղծ լուրերից և խաբեություններից: Հանրային առողջապահության վարչությունը մշտապես մամուլի ասուլիսների, սոցիալական մեդիաների և մեր կայքի միջոցով կտարածի հավաստի տեղեկատվություն, ներառյալ՝ Լոս Անջելես շրջանում նոր դեպքերի մասին հայտարարություններ: Կայքը պարունակում է COVID-19-ի մասին ավելի շատ տեղեկատվություն, ներառյալ՝ Հաճախակի տրվող հարցեր (ՀՃՀ), ինֆոգրաֆիկա և սթրեսի հաղթահարման ուղեցույց, ինչպես նաև ձեռքերի լվացման հետ կապված խորհուրդներ:

- Լոս Անջելես շրջանի Հանրային առողջապահության վարչություն (ԼԱՇՀԱՎ, Շրջանային)
 - <http://publichealth.lacounty.gov/media/Coronavirus/>
 - Սոցիալական մեդիա՝ @lapublichealth

Նոր կորոնավիրուսի մասին տեղեկատվության այլ հավաստի աղբյուրներ են՝

- Հանրային Առողջապահության Կալիֆոռնիայի Վարչություն (ՀԱԿՎ, Նահանգային)
 - <https://www.cdph.ca.gov/Programs/CID/DCDC/Pages/Immunization/nCOV2019.aspx>
- Հիվանդությունների Վերահսկման և Կանխարգելման Կենտրոններ (ՀՎԿԿ, Ազգային)
 - <http://www.cdc.gov/coronavirus/novel-coronavirus-2019.html>

Եթե ունեք հարցեր և ուզում եք խոսել ինչ-որ անձի հետ, ապա կարող եք զանգահարել 2-1-1 Լոս Անջելես համայնքի տեղեկատվության գծով, որը մատչելի է 24 ժամ: